# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**26 սեպտեմբերի 2017 թվականի N 200-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 54-րդ հոդվածի, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի $56^{1}$-րդ հոդվածի, «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի գեոդեզիայի և հողային պետական տեսչության 2017 թվականի հունիսի 20-ի թիվ 03 ակտը՝ **որոշում եմ.**

1. Համայնքային սեփականության հողամասերի օգտագործման տրամադրման կարգը խախտելու համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստի համայնքի ղեկավար ***Արտյոմ Հայրապետյանին*** նշանակել տուգանք՝ *նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով*:

2. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի-մարզային հողային պետական տեսչության պետ *Գուրգեն Ավետիսյանի* վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

**2017 թվականի սեպտեմբերի 26**
**ք. Հրազդան**